ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

<u>ՎԱՐՈՐԴԻ</u> ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ Երկարաժամկետ, փորձաշրջանով
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐԸ՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏՆ Է՝ 15.08.2022թ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտարարում է վարորդի թափուր աշխատատեղի մասին: Վարորդը ապահովելու է Հանձնաժողովի ղեկավարի, ղեկավար կազմի, այդ թվում նաև աշխատակիցների տեղափոխումը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մարմնին կցված ծառայողական մեքենայով աշխատաքնային հանձնարարությունների կատարման շրջանակներում Հանձնաժողովի ղեկավարին, ղեկավար կազմին, աշխատակիցներին անվտանգ տեղափոխել Երևանի տարածքում, ինչպես նաև գործուղումներ ՀՀ մարզեր,
- Ապահովել ամրակցված մեքենայի սարքին լինելը, իսկ մեքենայի անսարքության դեպքում հրատապ զեկուցել և վերահսկել/ընդունել ղեկավարի կողմից հաստատված վերանորոգող ընկերության մատուցած ծառայությունները,
- ներկայացել մեքենայի վառելանյութի ծախսի հաշվետվությունները,
- Պահպանել ամրակցված մեքենան պատշաճ կերպով և շահագործել մեքենայի շահագործման տեխնիկական պահանջներին և կանոններին համապատասխան,
- Կատարել ղեկավարի համապատասխան այլ հանձնարարականներ:

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- B կարգի վարորդական իրավունք,
- Առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ,
- Արագ կողմնորոշվելու ունակություն, մանրուքների նկատմամբ ուշադրություն, կազմակերպչական և հաղորդակցման ունակություններ,
- ՀՀ մարզեր ճամփորդելու հնարավորություն՝ ծրագրային գործուղումների շրջանակում:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը օրենքով ստեղծված ինքնավար մարմին է, որը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով և այլ ոլորտը կարգավորող օրենսդրական, ենթաօրենսդրական ակտերով: Հանձնաժողովի գործառույթներին ծանոթանալու համար անցնել հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=114355 :

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ
105824 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և պարտադիր վճարները)

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ
Դիմող ՀՀ քաղաքացիները hr.cpcarmenia@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին **պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

- ինքնակենսագրական /հայերեն լեզվով/.
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր, առկայության դեպքում).
- աշխատանքային գրքույկ (գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ կամ այլ փաստաթուղթ/եր համապատասխան մարմնից/ներից).
- հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին:

Ինքնակենսագրականը ուղարկելիս թեմայի դաշտում պարտադիր նշել «Վարորդ» հաստիքի անվանումը: Փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո հարցազրույցի փուլ անցած թեկնածուները լրացուցիչ կտեղեկացվեն հարցազրույցի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին : Հարցերի կամ այլ մանրամասների համար կարող եք զանգահարել՝ **012-77-77-24** հեռախոսահամարին կամ գրել անձնական նամակ hr.cpcarmenia@gmail.com **էլեկտրոնային փոստի հասցեին:**